ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1915-1918 ԹԹ.)

Սեդա Պարսամյան

Հոդվածում ներկայացվում է 1915-1918 թվականներին հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման երիտթուրքական քաղաքականությունը՝ որպես ցեղասպանական ծրագրի բաղկացուցիչ մաս՝ հետևյալ դիտարկումներով.

ա) Ցույց է տրվում մինչև ցեղասպանությունը հայկական ազգապատկան կալվածքների հետագա յուրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը կառավարության կողմից: Նման կանխամտածված քայլ ենք դիտարկել օրինակ հայկական եկեղեցական կալվածքներն անժառանգ ճանաչելուն ուղղված երիտթուրքական հետևողական քաղաքականությունը:

բ) Ներկայացված են ցեղասպանության ընթացքում հայերի մասնավոր և ազգային ունեցվածքի յուրացմանը միտված կառավարության որոշումները, ապա և դրանց հետևողական գործադրումը:

գ) Ուսումնասիրված է հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման գործում հասարակության լայն զանգվածների ներգրավվածության ու գործառույթների հարցը:

Բանալի բառեր. մշակութային արժեք, ազգային հարստություն, երիտթուրքական կառավարություն, կառավարական որոշումներ, ոչնչացում, բռնագրավում, յուրացում, պետական քաղաքականություն, ցեղասպանություն, դիտավորություն:

***

1890-ականներից Օսմանյան կայսրությունում հայկական մշակութային արժեքների[1] յուրացման և ոչնչացման համատարած քաղաքականությունն առավել համակարգված և հետևողական բնույթ կրեց երիտթուրքերի կառավարման տարիներին: Եթե նախկինում կոտորածներն ու դրանց ընթացքում իրագործված ոչնչացումներն ու ավերածությունները «պատժիչ» գործողությունների նպատակ ունեին՝ միաժամանակ ձգտելով շեղել հայ ժողովրդին ազգային զարթոնքի ուղուց, ապա այժմ նպատակը հայերի բնաջնջումն ու նրանց հետ կապված յուրաքանչյուր հետքի ոչնչացումն

1 Մշակութային արժեք հասկացությունը կիրառելիս առաջնորդվել ենք իրավագետ Ռաֆայել Լեմկինի առաջարկած մշակույթի սահմանմամբ՝ որպես ցեղասպանության բաղադրիչ: Նա մշակութային արժեքների ոչնչացման կամ մշակութային ցեղասպանության *(Cultural Genocide)* գործընթաց ներառեց խմբի ազգային ավանդույթների, լեզվի արգելքը, հուշարձանների, արխիվների, գրադարանների ոչնչացումը, ինչպես նաև խմբի մշակույթն ու արվեստը կրող մարդկանց բնաջնջումը: Չնայած քննարկումներին՝ մշակութային ցեղասպանությունը բնորոշող և դատապարտող սահմանումները չներառվեցին ՄԱԿ-ի «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի վերջնական տեքստ: Սակայն ժամանակակից միջազգային իրավունքում այդ դրույթները հաստատագրվեցին որպես միջազգային իրավական պարտավորություններ՝ մշակութային ժառանգության պահպանման ու դրանց ոչնչացման համար պատասխանատվության ենթարկելու համար: Մանրամասն տե՛ս Պարսամյան Ս., «Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. տեսական հիմնադրույթներ», *Ցեղասպանագիտական հանդես, 2(2),* 2014, էջ 164-175:

էր: Երիտթուրքական վարչակարգը հարձակում գործեց սոցիալական այն բնութագրիչների վրա, այն է՝ ազգ, մշակույթ, լեզու, որոնք, իրենց խորին համոզմամբ, լուրջ վտանգ էին ներկայացնում օսմանյան ինքնիշխանությանը, միասնությանն ու առավելապես միատարրությանը:

Երիտթուրքական իշխանությունների կողմից հայերի բնաջնջմանը վերաբերող՝ առ այսօր հայտնի փաստաթղթերի կամ որոշումների ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ հայերի մշակութային ցեղասպանությունը կամ հայկական հետքի ոչնչացումը, թեև ոչ այնքան առաջնային խնդիր, ինչպես ֆիզիկական բնաջնջումը, եղել է երիտթուրքերի ցեղասպանական ծրագրի բաղկացուցիչ մաս: Ստորև բերված փաստարկներն ուղղակի և անուղղակի վկայում են երիտթուրքական կառավարության կողմից հայկական մշակութային արժեքների կամ հայկականություն հիշեցնող բոլոր հետքերի ոչնչացման կանխամտածվածությունն ու դիտավորությունը:

Մեր կարծիքով, երիտթուրքական կառավարությունը կայսրության հայերի բնաջնջումը ծրագրել էր դեռ մինչև Առաջին աշխարհամարտը[2]: Կայսրության Ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ 1912-1913 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից կազմվել և Թուրքիայի արդարադատության ու դավանանքների նախարարությանն է ներկայացվել պաշտոնական ցուցակագրություն՝ կայսրության տարածքում գործող հայկական եկեղեցիների և վանքերի թվաքանակի, գտնվելու վայրի վերաբերյալ և այլ մանրամասներ[3]: Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդելու, որ հայկական վանքերի ու եկեղեցիների նկատմամբ ո՛չ օսմանյան սուլթանների և ո՛չ էլ երիտթուրքական իշխանությունների կողմից նախկինում երբեք նման հետաքրքրություն չի ցուցաբերվել, և ո՛չ Հայոց պատրիարքարանի և ո՛չ էլ առաջնորդարանների կողմից նախկինում նման ցուցակներ չեն ուղարկվել կառավարական մարմիններին: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ երիտթուրքական կառավարության ցուցաբերած նման հետաքրքրությունն Առաջին աշխարհամարտի նախօրեին որոշակի նպատակ է հետապնդել:

Որպեսզի ապացուցենք վերոնշյալը, փորձենք հերքել երիտթուրքական կառավարության ցուցաբերած նման հետաքրքրության հնարավոր բացատրությունը՝ դիտար-

---

2 Այս հարցի վերաբերյալ ցեղասպանագիտության մեջ գոյություն ունի երկու հակադիր տեսակետ. մի խումբ ցեղասպանագետների պնդմամբ՝ Հայոց ցեղասպանությունը կանխորոշված, շարունակական գործընթացի հետևանք էր (այս տեսակետի գլխավոր պաշտպանը Վահագն Դադրյանն է): Գիտնականների մյուս խումբը, չբացառելով Հայոց ցեղասպանության՝ շարունակականությամբ բացատրվող փաստերը, շրջանառում է՝ վերջինիս չկանխորոշված, նախապես չծրագրված լինելու տեսակետը՝ պնդելով, որ այն ավելի շուտ կործանման եզրին կանգնած կայսրության նախաձեռնած դիպվածային իրադարձություն էր (այս տեսակետի գլխավոր պաշտպանը Ռոնալդ Սյունին է): Գիտական բանավեճի մասին մանրամասն տե՛ս Akçam T., *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton: Princeton University Press, 2012, pp. 126-129. Հայոց ցեղասպանության՝ երկարատև, շարունակական գործընթաց լինելու հիմնավորումները տե՛ս Սաֆրաստյան Ռ., *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)*, Երևան, «Լուսակն» հրատ., 2009:

3 Սաֆրաստյան Ա. Խ., «Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և Դավանանքների մինիստրությանը ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913 թթ.)», *Էջմիածին*, 1965, Ա (յունուար), էջ 40-42:

կելով լոկ վերջինիս կողմից իրականացվող ժողովրդագրական քաղաքականության համատեքստում: 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներում Թուրքիայի կրած ծանր կորուստներից հետո Միություն և առաջադիմություն կոմիտեի համար ազգային անվտանգության խնդիր դարձավ Անատոլիայի ազգային-կրոնական միատարրացումը, որը դրվեց բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականության հիմքում: Այս քաղաքականությունն իրագործելու համար ամենից առաջ հարկավոր էր վերաձևել օսմանյան բյուրոկրատիան, ստույգ տվյալներ ձեռք բերել Անատոլիայի ազգային-կրոնական համայնքների՝ ինչպես բնակչության, այնպես էլ գույքի վերաբերյալ: Առանձնահատուկ տեղ է հատկացվել շարժական ու անշարժ գույքին: Նահանգներ ուղարկված հույժ գաղտնի հեռագրերում Ներքին գործերի նախարարությունը տեղական պաշտոնյաներին հրահանգում էր «խիստ գաղտնի կերպով» ցուցակներ լրացնել քրիստոնյաների հարստության, կրթության, հասարակական կարգավիճակի և իրենց համայնքների նշանավոր ու ազդեցիկ անդամների մասին և ուղարկել նախարարություն[4]: Հրահանգների հույժ գաղտնիությունն ինքնին ենթադրում է որոշակի կանխամտածվածություն՝ քրիստոնյաների ունեցվածքի հետագա յուրացման հարցում:

Պատմաբան Թաներ Աքչամի համոզմամբ՝ հավաքված տեղեկությունները դրվեցին կայսրության քրիստոնյա բնակչության բռնի տեղահանման և նրանց փոխարեն մահմեդականներ բնակեցնելու՝ ինչպես նախապատերազմյան, այնպես էլ պատերազմական շրջանի քաղաքականության հիմքում[5]: Այլ ձևակերպմամբ՝ ժողովրդագրական այս քաղաքականությունը հնարավոր դարձրեց Հայոց ցեղասպանությունը:

Դեռ մինչև Առաջին աշխարհամարտը երիտթուրքական կառավարության կողմից հայերի գույքերի հետագա յուրացման համար մեխանիզմների մշակման կանխամտածվածության թեզն ապացուցելու հարցում կարևոր ուղենիշ է նաև հայապատկան ազգային կալվածքներն անժառանգ ճանաչելուն միտված թուրքական քաղաքականությունը: Այն ժամանակին անհանգստություն է առաջացրել հայ մտավորական-քաղաքական շրջանակներում: Դրա լավագույն վկայությունը 1911 թ. նոյեմբերի 28-ին Գրիգոր Զոհրապի[6]՝ մեծ վեզիր Քյուչուկ Մեհմեդ Սաիդին ուղղված խնդրագիրն է[7]: Ընդարձակ խնդրագրում Գ. Զոհրապը, ելնելով պատգամավորական իրավունքից և փաստերի վրա հիմնվելով, մանրամասն ներկայացնում է արևմտահայության ծանր կացությունը, տեղական իշխանությունների, դատարանների կամայականություններն

4 Տե՛ս Akçam T., նշվ. աշխ., էջ 36-40:

5 *Նույն տեղում:*

6 Գրիգոր Զոհրապ (1861-1915) – գրող, հրապարակախոս, փաստաբան-իրավագետ, հասարակական-քաղաքական գործիչ, 1908-1915 թթ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր:

7 Խնդրագիրը հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսել «Ազատամարտ» օրաթերթի՝ 1911 թ. դեկտեմբերի 21-22 (թիվ 776-777) համարներում: Տե՛ս «Պ. Զոհրապի յիշատակագիրը ուղղուած վարչապետ Սաիտ փաշային», «Ազատամարտ» (Կ.Պոլիս), 1911, 21 դեկտեմբեր, թիվ 776, 22 դեկտեմբեր, թիվ 777, 1911, էջ 1: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվող թուրքերեն բնագրից խնդրագրի ամբողջական թարգմանությունը Ա. Հ. Փափազյանի կողմից տե՛ս նաև՝ Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, *Հայագիտությունը արտասահմանում*, գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Գ. մատենաշար, թիվ 2 (56), Երևան, 1983, էջ 5-12:

ու զեղծումները, այդ թվում՝ ազգապատկան գույքի ու կալվածքների հափշտակումները[8]: Հայկական վանքերի, եկեղեցիների ու դպրոցների եկամուտը հանդիսացող կալվածքներն անժառանգ ճանաչելու գործում կարևոր դերակատարություն ուներ *Վաքֆ*ային տեսչությունը[9]՝ արտոնված կառավարության կողմից: Վերջինս ինչ-որ երևակայական արձանագրություններ կազմելու միջոցով պարբերաբար դատական գործեր է հարուցել հիշյալ կալվածքների անժառանգականության խնդրով՝ միևնույն ժամանակ խափանելով այդ հաստատությունների գործունեությունը[10]: Հայկական ազգապատկան կալվածքներն անժառանգ են ճանաչվել ու յուրացվել հիմնականում շարիաթական դատարանների[11] կայացրած վճիռներով՝ մեկ-երկու սուտ վկայությունների հիման վրա: Արևմտյան Հայաստանի տարածքում մեծ չափերի հասնող այդօրինակ յուրացումները, անկասկած, *Վաքֆ*ային տեսչության կամ դատարանների ինքնագործունեության հետևանք չէին, այլ իրականացվում էին կառավարության անմիջական թողտվությամբ և ցուցումներով: Այս առումով հատկանշական է վերոնշյալ խնդրագրում Գ. Զոհրապի՝ որպես իրավաբանի հիշեցումը մեծ վեզիրին՝ առ այն, որ *շարիաթ*ական դատարանը միայն կառավարության ցուցումով կարող է հողային դատեր լսել[12]: Վերոնշյալ խնդրի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը նույնպես դիմումներ է հղել կառավարությանը, որոնց ի պատասխան ստացվել է հետևյալ անհիմն պատճառաբանությունը՝ «օրենքի դրվածքը այդպես է»[13]: Խնդրագրի «Խաղաղության և կարգ ու կանոնի հաստատումը» խորագրի ներքո Զոհրապը կետ առ կետ արևմտահայությանը վերաբերող խնդիրների լուծման հավանական տարբերակներ է առաջարկում: Մասնավորապես ազգային կալվածքների հարցում նա պնդում է, որ հայկական դպրոցներին, եկեղեցիներին ու վանքերին կից հողերի և կալվածքների անժառանգության վերաբերյալ հարցապնդումներն արգելվեն, իսկ *նիզամիե* դատարաններին հանձնված դատերի առնչությամբ կառավարական խորհուրդը որոշում կայացնի *շարիաթ*ական դատարանների կայացրած վճիռները չեղյալ համարելու մասին[14]: Բանն այն է, որ *շարիաթ*ական դատարանների միջոցով հողերի յուրացումներն այնպիսի մեծ չափերի էին հասել, որ կառավարությունը որոշում ընդունեց հողային բողոքները վճռել *նիզամիե* դատարաններում: Սակայն կառավարության այդ «զիջումը» ևս որևէ արդյունք չտվեց, քանի որ «օրինական» դարձած

---

8 Տե՛ս Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, էջ 5-12:

9 Հիմնվելով շարիաթի սկզբունքների վրա՝ տնօրինում էր կրոնապատկան և սեփականատիրական այլ կալվածքներ:

10 Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, էջ 8:

11 Օսմանյան կայսրությունում գոյություն ուներ երկու տիպի դատարան՝ *շարիաթ*ական և *նիզամ*ական: Շարիաթական դատարանը գործում էր զուտ Ղուրանի դոգմաների հիման վրա, և նրա իրավասությանն էին ենթակա անշարժ գույքի, ամուսնության, ժառանգության, դավանանքի վերաբերյալ հարցերը, իսկ նիզամականը գործում էր պետության կողմից ընդունված քաղաքացիական օրենքների՝ «դյուսթուր»-ի հիման վրա:

12 Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, էջ 8:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում, էջ 11:

այդ յուրացումները պետական քաղաքականության մաս էին կազմում և այս կամ այն դատական մարմնի կամայական որոշումները չէին: Ազգապատկան կալվածքների յուրացման այս քաղաքականությունը հետագայում դրվեց տեղահանված հայության ունեցվածքը յուրացնելու քաղաքականության հիմքում և արտացոլվեց դրան ուղղված որոշումներում:

Պատկերն առավել պարզ է դառնում, երբ դիտարկում ենք երիտթուրքական կառավարության հետագա որոշումներն ու գործողությունները՝ ուղղված հայկական ազգային-մշակութային հաստատությունների դեմ:

Հայոց ցեղասպանության տարիներին հայկական պատմամշակութային հուշարձանների հետ մեկտեղ կողոպտվել ու ավերվել են նաև Հայոց առաջնորդարանները, այդ թվում և Կիլիկյայի կաթողիկոսարանը[15]: 1916 թ. հոկտեմբերի 7-ին Ահմեդ Ջեմալին[16] հղած իր հեռագրերից մեկում Թալեաթը բացատրելով, թե ինչու է Սսի հայկական կաթողիկոսարանի գույքը բռնագրավվել, և ինչ պատճառով է կաթողիկոսն աքսորվել Սսից, հետևյալն է գրում. «…նպատակն ուղղված է այդ վայրի գոյությունը լիովին վերացնելուն, վայր, որտեղ հայերը ենթադրում են, թե Կիլիկիայում շատ մեծ պատմական և ազգային հարստություններ կան, և որը իբրև թե եղել է հայկական կառավարության ամենավերջին արքայանիստ կենտրոնը»[17]: Թալեաթն այնուհետև խոսում է այս շրջանի բոլոր հայերին աքսորելուց հետո Սսում մնացած հայկական գոյությունը մեջտեղից վերացնելու անհրաժեշտության մասին[18]: Իր տեսակի մեջ բացառիկ այս վավերագիրը լիովին հաստատում է մեր կողմից առաջ քաշված այն թեզը, որ հայկական հետքերի վերացումն անկասկած երիտթուրքերի ցեղասպանական ծրագրի բաղկացուցիչ մաս է կազմել:

Թալեաթի հրահանգն անմիջապես գործի է դրվել Ջեմալ փաշայի զինակից և փոխանորդ Օմեր Ֆահրեդդինի[19] կողմից[20]: Վերջինս Կիլիկիայի հայկական հուշարձաններն ավերակների վերածելուց հետո հայտարարել է. «Աւետարանը ձեր ձեռքէն պիտի առնենք»[21]: Սսի մայրավանքը հայերի տեղահանությունից հետո վերածվել է մզկիթի[22]:

---

15 *Խմբագրական. Համաշխարհային պատերազմ*, «Մշակ» (Թիֆլիս), 1915, 21 օգոստոս, թիվ 183, էջ 1:

16 1914 թ. նշանակվել է կայսրության ռազմածովային նախարար, 1914-1918 թթ. Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատար, 1915-1917 թթ. Սիրիայի կառավարիչ, 1915 թ. կիլիկիահայության տեղահանության ու կոտորածների կազմակերպիչներից:

17 Աքչամ Թ., «Դա ցեղասպանություն է, պարո՛ն վարչապետ», թարգմանությունը՝ Մ. Անումյանի [http://akunq.net/am/?p=20598, դիտվել է՝ 01.09.2018]:

18 Նույն տեղում:

19 Օմեր Ֆահրեդդին (1868-1948) – Հայտնի «Անապատի վագր» մականվամբ, 1914 թ. նշանակվել է 4-րդ բանակին առընթեր, Մոսուլում տեղակայված 12-րդ ջոկատի հրամանատար, 1915 թ. գործուն մասնակցություն է ունեցել Ուրֆայի, Զեյթունի, Մուսա լեռան, Հաճնի հայերի ինքնապաշտպանության ճնշմանը:

20 Տօնապետեան Պ., *Ձայն կառապելոց*, Փարիզ, տպ.՝ Յակոբ Բ. Թիւրապեան, 1922, էջ 289-290:

21 Նույն տեղում:

22 Քէլեշեան Մ., *Սիս-մայրեան*, Պէյրութ, տպ. «Հայ ճեմարանի», 1949, էջ 200:

ա) Որոշումներ՝ միտված հայերի մասնավոր և ազգային ունեցվածքի յուրացմանը

Չնայած այն հանգամանքին, որ հայերի տեղահանության մասին որոշումն օսմանյան կառավարության կողմից ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին և գործադրության մեջ մտել 1915 թ. հունիսի 1-ին, երբ «Թաքվիմ-ի վեքայի» (Takvîm-i Vekâyi) պաշտոնաթերթում հրապարակվեց «Տեղահանության մասին ժամանակավոր օրենք»-ի տեքստը[23], առաջին զանգվածային տեղահանությունները, թալանն ու բռնագրավումները սկսվել էին դեռ ավելի վաղ[24]: Մասնավորապես, հայերին պարբերաբար թալանելու գործընթացը սկսվել էր դեռ 1914 թ. աշնան ընդհանուր զորակոչի հետ միաժամանակ, իսկ նոյեմբերին սրբազան պատերազմի հայտարարումը, նոր թափ հաղորդեց դրան[25]: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հավաստմամբ թուրքական բանակի մոբիլիզացիային ուղեկցող բռնագրավումներն իրականում վերածվեցին քաղաքային բնակչության լայնածավալ կողոպուտի[26]:

Այսպիսով, ամենաթողության պայմաններում մուսուլման լայն զանգվածների կողմից հայերի ունեցվածքի հետ մեկտեղ բռնագրավվել, կողոպտվել ու յուրացվել են նաև հայկական ազգային-մշակութային հաստատությունները: Պետության համար առավել քան հրատապ էր դառնում զանգվածային թալանը զսպելու և պետական գանձարանը հարստացնելու ուղղությամբ միջոցառումների իրականացումը: Երիտթուրքական կառավարությունն այս խնդիրը լուծեց ստորև ներկայացված իրավական երեք հիմնական ակտերի գործադրմամբ՝ այդպիսով փորձելով «օրինականացնել» հայերի ունեցվածքի թալանը:

Երիտթուրքական կառավարության կողմից ընդունվել և 1915 թ. մայիսի 28/հունիսի 10-ին հրապարակվել է 34 հոդվածներից բաղկացած հրահանգ (talimat-name, այսուհետև հունիսի 10-ի հրահանգ), որը ցուցումներ է պարունակել տեղահանվածների ունեցվածքի, ազգային կալվածքների գրանցման կարգի, տնօրինման և պատերազմի ավարտից հետո դրանք իրենց տերերին վերադարձնելու մասին[27]: Այս

---

23 Akçam T., *A Shameful Act. The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, N. Y., Henry Holt and Company, 2006, p. 194. Տե՛ս նաև Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 187:

24 Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ереван, МИГА, 2013, с. 7. Տե՛ս նաև Ինճիկյան Հ. Գ., *Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ*, Երևան, «Հայաստան» հրատ., 1984, էջ 296-297:

25 Տե՛ս Morgenthau H., *Ambassador Morgenthau's story*, New York, Doubleday, Page and Company, 1918, էջ 169-170, ինչպես նաև Զոմմեր Է., *Ճշմարտությունը Աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին*, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մակարյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 2002, էջ 16:

26 Morgenthau H., նշվ. աշխ., էջ 64:

27 Հրահանգի ամբողջական տեքստը հայերեն թարգմանությամբ առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Հայկազն Ղազարյանը, սակայն հրահանգի ընդունման ամսաթիվը նշելով «մայիս 16, ի զօրու՝ գործադրութեան համար մայիս 26, 1331 (1915)» (տե՛ս Ղազարեան Հ., *Ցեղասպան թուրքը*, Պէյրութ, տպ. Համազգային, 1968, էջ 227-235), ինչին հանդիպում ենք նաև հետագայում հրատարակված ցեղասպանագիտական գրականության մեջ: Տե՛ս Վարդան Լ., *Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը*, Պէյրութ, տպ. «Ատլաս», 1970, էջ 93-100: Ինճիկյան Հ. Գ.,

հրահանգի՝ հայտնի նաև որպես «լքյալ գույքերի օրենք» անվամբ, 2-րդ, 3-րդ, 6-րդ հոդվածներն անմիջականորեն առնչվում են ազգային-մշակութային հաստատություններին: Համաձայն 2-րդ հոդվածի՝ գյուղերի և ավանների բնակչության տարագրումից հետո վերջիններիս պատկանող տները և բոլոր շենքերը (խոսքը վերաբերում է նաև ազգային-մշակութային հաստատություններին)՝ ներսում գտնվող ապրանքներով, արտոնված հատուկ հանձնախմբերի կողմից պետք է փակվեին, դռները կնքվեին և պահպանության տակ առնվեին[28]: Համաձայն 3-րդ հոդվածի՝ եկեղեցիներն ու դպրոցները վերածվելու էին պահեստավայրերի, որտեղ պետք է փոխադրվեին տեղահանվածների՝ «պահպանության» տակ առնված գույքերը՝ արձանագրվելուց հետո միայն[29]: Ինչ վերաբերում է եկեղեցապատկան ունեցվածքին, ապա 6-րդ հոդվածով սահմանված է, որ եկեղեցիներում առկա գույքը, պատկերները, սուրբ գրքերը «տոմարի» (գրանցամատյան) մեջ պետք է արձանագրվեն և կից տեղեկագրով պահվեն տեղերում: Ապա տարագրված բնակչության՝ որոշակի վայրում հաստատվելուց հետո յուրաքանչյուր գյուղին պատկանող եկեղեցական գույքը նրանց պետք է ուղարկվի[30]:

1915 թ. սեպտեմբերի 13/26-ին հրապարակվել է 11 հոդվածներից բաղկացած ժամանակավոր օրենք՝ հայտնի նաև որպես լուծարման օրենք (Tasfiye Kanunu), որի գլխավոր նպատակը հայերի ունեցվածքի լուծարումն էր[31]: Այն կոչված էր նաև լրացնելու նախորդի բացթողումները, մասնավորապես հստակեցնելու սեփականատերերի իրավունքները, հանձնաժողովների և ենթահանձնախմբերի կազմության ձևն ու գործելակերպը[32]: Այս օրենքի 2-րդ հոդվածով հստակեցվել է մինչև անգամ «խնդրո առարկա անձերու [հայերի] շենքերի և եկեղեցապատկան հողերի» արձանագրության վայրը, այն է՝ Բարեսիրական հաստատությունների նախարարության (Evkaf) անունով, իսկ 9-րդ հոդվածով՝ վարձակալության ենթակա (icari tayinli) շենքերը, եկեղեցապատկան հողերը և Էվքաֆի ու տնտեսական նախարարությունների

Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, «Հայաստան», 1984, էջ 300 և այլն: Ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, ավելի ուշ խոսելով սույն հրահանգի, կամ ինչպես ինքն է նշում, հավելյալ օրենքի ընդունման ու գործադրման մասին, ինչը փաստորեն հաջորդել է մայիսի 27-ին ընդունված տեղահանության օրենքին, նշում է հունիսի 10 (նոր տոմարով) ամսաթիվը, որը հետագայում տեղ է գտել նաև ցեղասպանագետներ Թաներ Աքչամի, Ուղուր Ումիթ Ունգորի և այլոց ուսումնասիրություններում: Տե՛ս Dadrian V., *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Oxford, Berghahn books, 1995, p. 222, ինչպես նաև Akçam T., *A Shameful Act*, p. 188; Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London, 2011, p. 44. Հրահանգի անգլերեն թարգմանությունը տե՛ս Baghdjian K. K., *The Confiscation of Armenian Properties by the Turkish Government said to be abandoned,* Antelias, "Khatchig Babikian Literary Fund"-N-3, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, pp. 480-487.

28 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 227:

29 Նույն տեղում, էջ 228:

30 Նույն տեղում, էջ 229:

31 Dadrian V., *The History of the Armenian Genocide,* p. 222, տե՛ս նաև Akçam T., *A Shameful Act,* էջ 188: Այս օրենքի հայերեն ամբողջական թարգմանությունը տե՛ս Վարդան Լ., նշվ. աշխ., էջ 153-155:

32 Վարդան Լ., նշվ. աշխ., էջ 153-155:

մոտ արձանագրված այլ հողեր ներգաղթի օրենքի համաձայն թույլատրվում էր հատկացնել մուսուլման ներգաղթողներին՝ «մուհաջիրներին»[33]:

Սեպտեմբերի 26-ի օրենքն ուժի մեջ մնաց մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը[34]: Այն ևս բավարար չեղավ հայերի ունեցվածքի և ազգային կալվածքների բռնագրավումն ու թալանն «օրինականացնելու» համար: Վերջինիս 8-րդ հոդվածի համաձայն՝ մշակվել և 1915 թ. հոկտեմբերի 26-ին «Թաքվիմ-ի վաքայի»-ում հրապարակվել է 25 հոդվածներից կազմված մեկ այլ կանոնադրություն՝ «13 սեպտեմբեր 1331 [1915]-ին տրված ժամանակավոր օրենքի գործադրումը հստակեցնող կանոնագիր» խորագրով[35]: Վերջինիս 16-րդ հոդվածի համաձայն՝ եկեղեցիներում գտնվող գույքերը, պատկերները, սուրբ գրքերը պետք է արձանագրվեին տոմարի մեջ և վերցվեին պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը պետք է փոխանցվեր կրթական տեսչություններին[36]:

Հատկանշական է, որ ինչպես տեղահանության, այնպես էլ տեղահանվածների ունեցվածքին վերաբերող վերոնշյալ իրավական ակտերում ձևակերպումները, որպես կանոն, ընդհանուր են եղել՝ չնշելով ո՛չ հայերի և ո՛չ էլ որևէ այլ ազգի անվանում: Ավելի ուշ պարզ է դարձել, որ դա արվել է օրենքի իրական նպատակները հայերից թաքցնելու համար[37]:

---

33 Դեռևս XIX դարի կեսերից սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից Օսմանյան կայսրությունը, մասնավորապես Արևմտյան Հայաստանը «մուհաջիրներով»՝ մուսուլման վերաբնակիչներով բնակեցնելու ժողովրդագրական քաղաքականությունն ուներ նաև ընդգծված հակահայկական ուղղվածություն: Դրանով սուլթանական կառավարությունը ձգտում էր Արևմտյան Հայաստանում բարձրացնել մահմեդական ազգաբնակչության թվաքանակը՝ միաժամանակ խրախուսելով հայերի արտագաղթը: 1913 թ. Բալկանյան պատերազմների ավարտից հետո հիմնականում Բալկաններից դեպի կայսրություն սկսվեց «մուհաջիրների» նոր հոսք, որոնց մի մասը վերաբնակեցվեց Արևմտյան Հայաստանում: Այս մասին մանրամասն տե՛ս Авакян А., *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)*, Ереван, МИГА, 2001, с. 134-136, 222-223. Վարդան Լևոն, նշվ. աշխ., էջ 153, 155:

34 Հովհաննիսյան Ա., *Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում*, Երևան, «Գիտություն», 2016, էջ 18:

35 Ստորագրված սուլթան Մեհմեդ Ռեշադի, Շեյխ ուլ-իսլամ և կայսերական վաքֆների նախարար Հայրիի, Մեծ վեզիր Մեհմեդ Սայիդի, Ներքին գործերի նախարար և ֆինանսական գործերի նախարարի տեղակալ Թալեաթի, Ռազմական նախարար և Ծովային նախարարի տեղակալ Էնվերի, Արդարադատության նախարար և պետական խորհրդի տեղակալ Իբրահիմի, Արտաքին գործերի նախարար Խալիլի, Լուսավորության նախարար և կապի նախարարի տեղակալ Ահմեդ Շյուքրիի, Հասարակական աշխատանքների նախարար Աբբասի, Առևտրի և գյուղատնտեսության նախարար Ահմեդ Նեսիմի կողմից: Այս փաստաթղթի օսմաներեն բնագրի առաջին և վերջին էջերի լուսապատճենը տե՛ս *Հավելված*, պատկեր 1:

36 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության 16-րդ հոդվածի օսմաներեն բնագրի լուսապատճենը տե՛ս *Հավելված*, պատկեր 2: Թարգմանությունն օսմաներեն բնագրից՝ բանասեր, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Միհրան Մինասյանի: 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության ամբողջական թարգմանությունը տե՛ս նաև Փափազյան Ա., *Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.)*, Երևան, «Զանգակ-97», 2002, էջ 214-222:

37 Dadrian V., *The History of the Armenian Genocide*, p. 224.

Այսպիսով, համաձայն վերոնշյալ հիմնական ակտերի, հայերի հոգևոր և ազգային-մշակութային հաստատությունները, մասնավորապես վանքերը, եկեղեցիները, դպրոցները՝ կից շինություններով ու կալվածքներով, արտոնված հանձնաժողովների կողմից գույքագրվելուց հետո պետք է փակվեին, դռները կնքվեին և հանձնվեին մուսուլման ներգաղթողներին: Վերջիններս իբրև պետք է «պահպանեին» և «պատասխանատվություն կրեին» այդ շինությունների համար և հնարավոր ավերածությունների դեպքում «փոխհատուցեին վնասը»: Ինչ վերաբերում է վանքերում ու եկեղեցիներում պահվող մշակութային և կրոնական արժեք ներկայացնող առարկաներին՝ ձեռագրերին, պաշտամունքային գրքերին, սրբապատկերներին և այլ արժեքների, ապա դրանք նույնպես պետք է մանրամասն արձանագրվեին և պահպանության տակ առնվեին՝ ավելի ուշ իրենց օրինական տերերին վերադարձնելու պայմանով: Չնայած գույքագրման և պահպանության մասին մանրամասն ձևակերպումներին՝ ակնհայտ էր, որ այդ փաստաթղթերը ձևական բնույթ էին կրում, քանի որ դրանց հեղինակները լավ գիտեին, թե իրականում ինչ ճակատագիր էր սպասվում այդ ունեցվածքի իրական տերերին՝ կայսրության հայ բնակչությանը: Հետևաբար, այդ ակտերը կոչված էին միայն «իրավական» ուղի հարթելու հայերի ինչպես մասնավոր, այնպես էլ ազգապատկան ժառանգության հետագա բռնագրավման ու թալանի համար:

Վերոնշյալ երեք հիմնական ակտերից բացի, երիտթուրքական կառավարությունը տեղական իշխանություններին է ուղարկել նաև միջանկյալ այլ հրահանգներ ու շրջաբերականներ՝ մասնավորապես տեղահանվածների ունեցվածքի վաճառքին[38], անշարժ գույքի տնօրինմանը[39], այդ թվում՝ ազգային հաստատություններին և դրանցում առկա գույքի տնօրինման, յուրացման եղանակներին վերաբերող, որոնց մասին կխոսենք ստորև:

բ) Եկեղեցական գույքի լուծարում և յուրացում

Ընդհանուր առմամբ ձևավորվել և մայրաքաղաքից գավառներ են գործուղվել թվով 33 «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովներ» (Emvâl-i Metruke Tesviye Komisyonu)[40]: Վերջիններս, իրենց ենթակայության տակ ունենալով հատուկ արտոնված ենթահանձնախմբեր, գտնվել են Ներքին գործերի նախարարության անմիջական վերահսկողության ներքո և յուրաքանչյուր 15 օրվա ընթացքում զեկուցագրերի միջոցով տեղեկացրել են իրենց գործունեության ընթացքի մասին[41]: Այս հանձնաժո-

38 1915 թ. հուլիսի 7-ի հրահանգով, օրինակ, թույլատրվել է տեղահանված հայերի ունեցվածքը վաճառել մուսուլմաններին: Տե՛ս Авакян А., *Геноцид армян,* էջ 73.

39 1915 թ. դեկտեմբերի 2 (15)-ին ընդունված հավելյալ օրենքը վերաբերվել է տեղահանվածների «լքյալ» անշարժ գույքի տնօրինման հարցերին, որին կցվել է գույքագրման ձևաթղթի օրինակ: Ձևաթղթի օսմաներեն բնագրի լուսապատճենը տե՛ս *Հավելված*, պատկեր 3:

40 Տե՛ս Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *նշվ. աշխ.,* էջ 66, տե՛ս նաև Վարդան Լ., *նշվ. աշխ.,* էջ 104: Հայկազն Ղազարյանը նշում է՝ «Լքյալ գույքերի վարչական հանձնաժողովներ» (Emvâl-i Metruke Idare Komisyonu), տե՛ս Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 227-228:

41 Ղազարեան Հ., նույն տեղում, տե՛ս նաև՝ Աստոյան Ա., *Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում,* Երևան, «Նաիրի», 2013, էջ 47:

ղովները պետք է գույքագրեին, ապա համաձայն հունիսի 10-ի հրահանգի 5-րդ հոդվածի արտոնված ենթահանձնախմբերի միջոցով հրապարակային աճուրդով վաճառեին հայերի մասնավոր շարժական ունեցվածքը՝ այդպիսով լուծարելով այն[42]: Խոսքը, սակայն, հայերի մասնավոր շարժական ունեցվածքի, այլ ոչ ազգապատկան կալվածքների ու մշակութային արժեքների մասին է: Մինչդեռ իրականում տեղի ունեցավ հետևյալը. հայկական եկեղեցիները վերածվեցին պահեստավայրի, ապա նաև վաճառատեղերի, որտեղ կենտրոնացվեց տեղահանված հայերին պատկանող շարժական ողջ ունեցվածքը՝ չնչին գներով աճուրդի միջոցով վաճառքի հանելու կամ հետագա թալանի համար[43]:

Ազգությամբ արաբ փաստաբան Ֆայեզ ալ-Ղուսեյնը, Դիարբեքիրում ականատես լինելով թուրքերի գործողություններին, իր հուշերում գրում է. «Ես հետևում էի, թե ինչպես խաչերը հանվում էին եկեղեցիների գմբեթներից, իսկ եկեղեցիներն օգտագործվում որպես պահեստ և շուկա՝ սպանվածների ունեցվածքը ամբարելու և վաճառելու համար»[44]:

Հայերի տեղահանությունից հետո այդպիսի պահեստավայրեր դարձան Սեբաստիա քաղաքի Ս. Աստվածածին Մայր տաճարը[45], Մուշի Ս. Մարինե, Ս. Գևորգ, Շեկ-Ավետարան[46], Էրզրումի առաքելական և կաթոլիկ եկեղեցիները[47], Սամսոնի հայ կաթոլիկ Առաջնորդարանն ու եկեղեցին[48], Տրապիզոնի Ս. Ստեփանոս[49] և բազմաթիվ այլ եկեղեցիներ: Սեբաստիայի նշված եկեղեցու մասին ականատեսներից մեկը գրում է. «Մայր եկեղեցին մթերանոցի վերածելով տեղահան եղողներու թողած ինչք ու ստացուածք, գոյքեր, կահկարասի և այլ հարստութիւն կառքերով կը փոխադրեն, կը մթերեն հոն. տարի մը և ավելի եկեղեցիին բակը, շրջակայքը մեծ պազար կը լարուի»[50]:

Չբավարարվելով հայերի մասնավոր ունեցվածքի վաճառքից ստացված հասույթով՝ չնչին գներով վաճառքի է հանվել նաև վանական ու եկեղեցական թանկարժեք

---

42 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 228-229:

43 *The treatment of Armenians in the Ottoman Empire. 1915-1916, Documents presented to Viscount Grey of Fallodon,* Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce, with a preface by Viscount Bryce, London, Stationery Office by Sir Joseph Causton and Sons, 1916, p. 403:

44 Faiz El-Ghusein *Martyred Armenia,* New York, 1918, p. 27.

45 Եկեղեցու գմբեթից խաչն իջեցնելու փորձը չի հաջողվել: Տե՛ս Գաբիկեան Կ., *Եղեռնապատում փոքրուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ,* Պոսթըն, «Հայրենիք», 1924, էջ 154, 562:

46 Կարապետյան Ե., *Տարոն և Սասուն. հուշեր, վկայություններ.* անտիպ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ֆոնդեր, ֆ. 8, թ. 3, տ. 4, էջ 578:

47 *Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին,* կազմեց՝ Արա Սարաֆյան, Երևան, 2004, էջ 186:

48 *Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին,* Ա հատոր, ֆրանսերենից թարգմանեց՝ դոկտ. Հ. Ստեփանեան, Պէյրութ-Լիբանան, 1960, էջ 221:

49 Kévorkian R. H., Paboudjian P. B., *Les Arméniens Dans L'Eempire Ottoman Ala Veille Du Genocide,* Paris, 1992, p. 186.

50 Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 563:

գույքը: Հայոց ցեղասպանության ականատես հայ կաթոլիկ արքեպիսկոպոս գերապայծառ Հ. Յովհաննես Շինիարան[51], 1916 թ. սեպտեմբերից երկու տարի աքսորի մեջ գտնվելով Թոքատում, իր տեսածի մասին հետևյալն է գրում. «Օր մըն ալ լսեցի մունետիկ մը, որ կը ծանուցանէր՝ թէ հրապարակային աճուրդ տեղի պիտի ունենար հայ-կաթողիկէ եկեղեցւոյ շէնքերէն մէկուն մէջ... Հոն կ՚ երթամ... կը տեսնեմ ջարդ ու փշուր եղած արձաններու դէզ մը. կոտրտած խաչեր՝ ծռմրտկած ու ճզմուած աշտանակներու հետ խառն ի խուռն, կանթեղներ՝ կտոր-կտոր, և բզքտուած եկեղեցական գրքեր...: Աճուրդի ատեն՝ կը տեսնեմ քահանայական զգեստներ՝ դեռ բոլորովին խունկ կը բուրեն»[52]:

Կողոպտվել ու յուրացվել են անգամ սպանված հոգևորականների կրած եկեղեցական թանկարժեք զարդերը: 1915 թ. օգոստոսի 6-ին Յոզղաթի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Դանիելյանին աքսորելուց, այնուհետև Գարտաշլարի ձորում սպանելուց հետո ոճրագործները կողոպտել էին նրա վրայի զարդերը, այդ թվում՝ եպիսկոպոսական մատանին[53]: Կ. Պոլսի Պատերազմական արտակարգ ատյանի նախագահը, խիստ հետաքրքրված լինելով արժեքավոր այդ մատանու ճակատագրով, 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին հետևողականորեն հանձնարարել է Յոզղաթի կառավարչին հետաքննություն անցկացնել և պատասխանել, թե ով է հանել եպիսկոպոսի մատանին, արդյո՞ք հանձնվել է լուծարքի հանձնախմբերին ու վաճառվել[54]: Հարցմանն ի պատասխան՝ 1919 թ. մարտի 3-ին Յոզղաթի կառավարիչը հաղորդել է, որ լուծարքի հանձնախմբի կազմակերպած աճուրդի ժամանակ Ֆեյազ բեյի պատասխանատվությամբ եպիսկոպոսական մատանին վաճառվել է 2350 դահեկանով: Ավելի ուշ, սակայն, պարզ է դարձել, որ, չնայած լուծարքի հանձնախմբերի ղեկավարներին տրված՝ աճուրդին չմասնակցելու հրահանգին, Ֆեյազ բեյն անձամբ է գնել մատանին[55]:

Չնայած նրան, որ հոկտեմբերի 26-ի կանոնադրության 18-րդ հոդվածով նախատեսվում էր «լքյալ գույքերի» վաճառքն իրականացնել հնարավորինս գույքի համապատասխան արժեքով[56], հարկ է ընդգծել հանձնախմբերի գործելակերպի կամայականությունն ու շտապողականությունը: Մասնավորապես բացահայտ անտեսվել կամ չնչին են արժևորվել եկեղեցական թանկարժեք իրերը, սուրբ գրքերը, մագաղաթ-ձեռագրերը և այլ առարկաներ: 1915 թ. նման սկզբունքով են արժևորվել և վաճառվել Այնթափի Մայր տաճարում պահվող երեք միավոր արծաթապատ կազմով սուրբ

---

51 Ընդհանուր փոխանորդ, Լիբանանի հույն կաթոլիկ եպիսկոպոս գրպծ. Յովսեփ Տումանի աքսորակից ընկերը:

52 Տե՛ս *Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը,* էջ 280:

53 Գրիկէր (Գրիգոր վարդապետ Կերկերյան), *Յոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը*, Նիւ Եորք, 1980, էջ 193-195:

54 Նույն տեղում:

55 Նույն տեղում, էջ 196-197:

56 Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 220-221:

գրքերը, արծաթե խաչերը, քշոցները[57], սրբապատկերները և այլ արժեքավոր իրեր[58]:

2012 թ. քրդական «Ֆըրաթ» լրատվական գործակալությունը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության ընթացքում հայկական գույքի բռնագրավման խնդրին և հղում կատարելով նշված ժամանակաշրջանի պարբերականներում հրապարակված նահանգային ֆինանսական վարչության (defterdarlik) և դատարանների հայտարարություններին, գրում է, որ եկեղեցական գույքն անգամ դատական որոշմամբ վաճառքի է հանվել թերթում հրապարակված հայտարարության միջոցով[59]:

Հայկական վանական ու եկեղեցական գույքի մյուս մասը՝ հիմնականում մետաղե անօթներ ու զանգեր, «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովներն» ուղարկել են Կ.Պոլիս, երբեմն նաև Գերմանիա՝ տեղի ձուլարաններում ձուլելու և պատերազմական նկատառումներով կիրառելու նպատակով[60]: Այս առումով եզակի է Յոզղաթի ժանդարմերիայի հարյուրապետ, Հայոց ցեղասպանության ոճրագործներից Շյուքրի բեյի խոստովանությունը, որում մասնավորապես ասվում է. «…Ասկէ զատ լքուած և կողոպտուած հարիւրաւոր եկեղեցիներու ու վանքերու բոլոր մեծ ու փոքր զանգակները Գերմանիա ղրկեցինք՝ Քռուփի (Krupp) գործարանին մէջ թնդանօթ ձուլելու համար…»[61]: Բեռլին են ուղարկվել նաև Անկարայի (Էնկյուրիո) հայկական եկեղեցիներից ու վանքերից կողոպտված գույքը[62]: 1916 թ. մայիսի 9-ին 7 սնդուկների մեջ ամփոփված՝ Կ.Պոլիս են ուղարկվել Բուրսայի Ս. Աստվածածին մայր տաճարի եկեղեցական սպասքն ու այլ թանկարժեք իրեր (ընդհանուր արժեքը կազմել է 650.000 օսմանյան ոսկեդրամ), որոնց ոսկյա և արծաթյա մասը ձուլվել և մեջիդիե կոչվող ոսկեդրամի է վերածվել[63]: Եկեղեցական գույքը հաճախ եկամտի աղբյուր է դարձել գերմանացի զինվորականների համար. լավագույն օրինակը Դերջանի Հողիկ գյուղի հայկական եկեղեցու՝ 20-30 օխա կշռող զանգն է, որը գերմանացի զինվորներից գնել և Կ.Պոլսի «Գալֆյան» որբանոցին է նվիրել Հակոբ Անդրեասյան անունով մի հայ՝ որբանոցի Ս. Աստվածածին նորակառույց մատուռի զանգակատանը կախելու նպատակով[64]:

Ակնհայտ է, որ «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովներ»-ի և ենթահանձնախմբերի անդամները, որոնք աշխատում էին գործողությունների բացարձակ ազա-

57 Եկեղեցական բոժոժավոր հովահար:

58 Կուրկէն, *Ի՛նչ եղան Այնթապի եկեղեցիին գոյքերը*, «Հայ Անթէպ» (Պէյրութ) 1966, թիւ 2 (22), էջ 40-41:

59 *Ցեղասպանությունը «թուրք»ացրել է նաև հայերի ունեցվածքը.* [http://akunq.net/am/?p=20765, դիտվել է՝ 12.06.2017 թ.]:

60 Տե՛ս, *Խմբագրական. Ահա եկեր են, բայց ի՞նչ կը գտնեն…*, «Արիամարտ» (Կ.Պոլիս) օրաթերթ, 1918, 25 դեկտեմբեր, թիւ 31 (1846), էջ 1: Պալաքեան ծ. Վարդ. Գ., *Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն*, հատ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպ., 1922, էջ 229:

61 Պալաքեան ծ. Վարդ. Գ., նշվ. աշխ., էջ 229:

62 Ակունի Սեպուհ, *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը*, Բ. տպագր., Կ.Պոլիս, 1920, էջ 189:

63 Աստոյան Ա., *Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները հայոց ցեղասպանության տարիներին*, Երևան, «Գիտություն», 2017, էջ 239-240:

64 «Հայրենիք» օրաթերթ (Կ.Պոլիս), 1918, 2/15 նոյեմբեր, թիւ 194:

տության ու անպատժելիության պայմաններում, միայն պետական գանձարանը լցնելու օգտին չէ, որ ծառայելու էին: Նրանցից շատերը գրպանել ու հարստացել են հայերի ինչպես մասնավոր, այնպես էլ ազգապատկան կարողության վաճառքից ստացված հասույթի թալանից: Յոզղաթի թուրքական որբանոցների նախկին տնօրեն Շէվգիի վկայությամբ տեղի «Լքյալ գույքերի լուծարող հանձնաժողովի» անդամ Նազըֆ բեյը, որ մեծ հարստություն էր կուտակել հայերին պատկանող ունեցվածքի հափշտակումից, Յոզղաթի փոստատան միջոցով 36.000 օսմանյան ոսկի է ուղարկել մայրաքաղաքում ապրող իր ընտանիքին ու Միություն և առաջադիմություն կուսակցության ընդհանուր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյի անունով, իսկ Կ.Պոլիս ուղևորվելով՝ իր հետ տարել է 50.000-60.000 օսմանյան ոսկու արժողությամբ գոհարեղեն, ադամանդակուռ խաչեր, եկեղեցական թանկարժեք անոթներ և իբր իր հետ ամուսնացած տասնչորս տարեկան մի հայ աղջկա[65]: Հատկանշական է, որ Յոզղաթի «Լքյալ գույքերի լուծարող հանձնաժողովի» անդամ Նազըֆ բեյի անունը հիշատակվում է նաև Առաքել Չաքրյանի[66]՝ Զավեն պատրիարքին ուղղված անտիպ նամակում (Բերա, 16 մարտ, 1919 թ.)[67]: Իր որբահավաք գործունեության ընթացքում Ա. Չաքրյանը բրիտանական դեսպանատան աջակցությամբ թուրքերի տներից հավաքագրել և Կ.Պոլսի պատրիարքարանին է հանձնել զգալի թվով կողոպտված եկեղեցական իրեր: Այս կերպ Չաքրյանը նշում է, որ չնայած վերոնշյալ անձը՝ Նազըֆը, նախկինում հերքել է իր մոտ հայերի իրեր պահելու մեղադրանքը, Կ.Պոլսի Այա-Սոֆիա թաղամասի նրա տան խոհանոցի գետնափոր գաղտնի պահեստից, ինչպես նաև Բանգալթը թաղամասի Ջաբեր փաշայի հարեմից, բրիտանացի և թուրք ոստիկանների ներկայությամբ խուզարկության միջոցով հայտնաբերվել են եկեղեցական մեծարժեք իրեր[68]:

Լայնածավալ կողոպուտի գործընթաց ներգրավված են եղել նաև պետական այլ պաշտոնյաներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ոստիկաններ ու զինվորներ, որոնք հատուկ հանձնախմբերի գործունեությանն օժանդակելուց զատ, կուտակել են մեծ հարստություն: Այսպես, 1915 թ. օգոստոսին Արմաշի հոգևորականությանը մեկուսացնելուց հետո Կ.Պոլսի Կենտրոնական բանտի տնօրեն Իբրահիմ Խայրին, տեղի մյուդիր Ֆահրեդդին Ահմեդը և վերջինիս եղբայր Օսման Սուդին ամբողջովին թալանել են դպրեվանքի մոտ. 80.000 օսմանյան ոսկուն համարժեք ունեցվածքը (քրիստոնեական հնություններ, մասունքներ, եկեղեցական թանկարժեք անոթներ, կահույք, յուղաներկ սրբապատկերներ, ձեռագիր մագաղաթներ և այլն),

---

65 Շէվգը, *Եոզկատի սարսափները (թուրք մը՝ն է, որ կը պատմէ, լսեցէ՛ք),* «Ճակատամարտ» օրաթերթ (Կ.Պոլիս), 1919, 4 հունվար, թիւ 41 (1855), էջ 2:

66 Առաքել Չաքրյան (1885-1954) – փարիզաբնակ մեծանուն գիտնական, ակադեմիկոս, 1919-1922 թթ. ընթացքում բրիտանական կառավարության աջակցությամբ զբաղվել է որբահավաք գործունեությամբ հատուկ այս նպատակով ստեղծված մարմնի շրջանակներում: Ա. Չաքրյանի որբահավաք գործունեության մասին մանրամասն տե՛ս Գզոյան Է., «Փրկություն հայ որբերին. Առաքել Չաքրյանի հուշերը», *Ցեղասպանագիտական հանդես, 4(2),* 2016, էջ 161-175:

67 *Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվ,* անմշակ ֆոնդ, Ա. Չաքրյանի նամակը՝ ուղղված Զավեն արք. Եղիայանին. նամակի լուսապատճենը տե՛ս *Հավելված,* պատկեր 4:

68 Իրերի ամբողջական ցուցակը տե՛ս նույն տեղում:

որի մի մասը փոխադրվել է Ադաբազարում գործող «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովի» անդամներին, իսկ պղնձե անոթները, աշտանակներն ու այլ իրեր՝ Կ.Պոլիս՝ բրիտանական «Բոն» ընկերության գրավված գործարանում ձուլելու համար[69]:

1916 թ. օգոստոսին Ջեմալ փաշայի կողմից «Հայ տեղահանվածների տեսուչ» նշանակված Հասան Ամջայի (Հասան Վասֆի) վկայությունների համաձայն՝ Սվազի նախկին վալի Մուամմեր բեյի գործընկեր և օգնական Մերզիֆոնի նախկին քայմաքամ Ֆայիքը և նրա հանցավոր գործընկեր, ժանդարմերիայի կապիտան Մահիր բեյը, հայերի տեղահանության ընթացքում բազմաթիվ օջախներ և հոգևոր շենքեր թալանելով, 30-40 հազար լիրայի հարստություն են կուտակել և այժմ հաճելի ժամանակ են անցկացնում Ստամբուլում[70]: Կեսարիայի Ս. Կարապետ վանքի թանկարժեք իրերի մի մասը յուրացրել է Էսքիշեհիրի կառավարիչ Զեքայի բեյը[71]:

Որոշ վայրերում առավել արժեքավոր իրերն ապահով պահելու պատրվակով տարվել են տեղական ոստիկանատներ, ապա բաժանվել ոստիկանների միջև[72]: Կեսարիայի 15-րդ զորագնդի հրամանատարի փոխանորդ Շեհաբէդդինի՝ Անկարայի զորաբանակի հրամանատարությանն ուղղված 14 հուլիս 1915 թվակիր ծածկագիր-տեղեկագրում մասնավորապես ասվում է. «… այս գաւառակի [Պողազլյանի] հայաբնակ գիւղերը կարելի է ըսել թէ բոլորովին մաքրագործուած են… ցաւալի երևոյթներեն մին սաստիկ թալանն է զոր կը գործեն հայ գիւղերու մէջ ոստիկանութեան լրացուցիչ մարդերը, չէրքեզ ձիաւորները… »[73]:

1915 թ. թուրք զինվորներն ամբողջովին թալանել են Սեբաստիա քաղաքի Ս. Աստվածածին, Ս. Սարգիս, Ս. Փրկիչ, Ս. Մինաս եկեղեցիները և հարակից Ս. Նշան վանքը[74]: Ականատեսներից մեկը, նկարագրելով վերջինիս կողոպտման տեսարանը, գրում է. «900-ամեայ հնամենի այս վանքին գաղտնի պահարանի բանալին չէին գտած… քանի մը զինուորներով, լծակներով, մուրճերով կղպանքը կոտրած եւ պատի մեջ ծեփուած երկաթեայ դուռը բացած էին: Հոն գտան չաթալ-թագեր, գրքեր, անգին ձեռագիրներ, ոսկի եւ արծաթ իրեղէններ, հնութիւններ, ինչ որ կար, մօտ 3. 000 կտոր արժէքաւոր առարկաներ, 293 ձեռագիրներ»[75]:

Բուրսայում թուրքական զորքը զենք փնտրելու պատրվակով պաշարել է հայկական եկեղեցին, քանդել խորանի հետնապատը, սակայն ոչինչ չգտնելով, թալանել է գույքը[76]: 1915 թ. օգոստոսի 2/15-ին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Զավեն

69 Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին,* խմբ.՝ Գալայճեան Ա., Նիւ Եորք, 1985, էջ 360:

70 Ամջա Հ., *Տեղահանություն և ոչնչացում. տեղահանության իրական պատկերը,* օսմաներենից թարգմանությունը՝ Արսեն Ավագյանի, Երևան, 2007, էջ 42:

71 «Հայրենիք» օրաթերթ, 1918, 26 հոկտեմբեր / 8 նոյեմբեր, թիւ 187:

72 Morgenthau H., նշվ. աշխ., էջ 311:

73 Գրիկէր, նշվ. աշխ., էջ 149-150:

74 «Ալիս» (Նյու Յորք), 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիւ 6, էջ 13:

75 Նույն տեղում:

76 Ակունի Սեպուհ, նշվ. աշխ., էջ 267:

Եղիայանի՝ Բուլղարիայի առաջնորդ Ղևոնդ Եպս. Դուրյանին հղված նամակում մասնավորապես ասվում է. «…Եկեղեցիները արդէն կողոպտուած և մզկիթի, ախոռի կամ ուրիշ բաներու վերածուած են: Արդեն Պոլսոյ հրապարակին վրայ սկսած են ծախուիլ հայ եկեղեցիներու անօթները և այլ գոյքերը…»[77]:

1915-1918 թթ. ընթացքում հայկական վանական ու եկեղեցական գույքի մի մասը թալանվել է նաև հայերի թողած ունեցվածքը հնարավորինս արագ յուրացնելու մոլուցքով տարված տեղի մուսուլման ազգաբնակչության կողմից[78]: Ցեղասպանության ընթացքում բռնի իսլամացված և բալուեցի մի թուրքի կողմից կնության առնված Ազնիվ Տեր Գուրգենյանի վկայությամբ՝ ամուսինը Բալուի Ս. Աստվածածին եկեղեցու կողոպտիչներից է եղել՝ իր հետ տուն բերելով հաղորդության ժամանակ կիրառվող հայերեն արձանագրությամբ ու Աստվածամոր դիմապատկերով սկիհը, եկեղեցական սպասք ու անոթներ, որոնք մի որոշ ժամանակ օգտագործվել են կենցաղում[79]: Հետագայում փախչելով գերությունից՝ Ազնիվն այդ անոթներն ու սպասքը հանձնել է Խարբերդի Ս. Աստվածամոր եկեղեցուն[80]: 1919 թ. սեբաստահայության ազգային-մշակութային արժեքները փնտրելու նպատակով Սեբաստիա գործուղված Երուսաղեմի միաբաններից վարդապետ Աճեմյանի՝ 26 մայիս 1919 թվակիր տեղեկագրում՝ ուղղված «Սենեքերիմյան Միությանը»[81], հաղորդվում է, որ քաղաքի եկեղեցական անոթների մի մասն Իմդատ անունով թուրքի մոտ է, Ս. Աստվածածին Մայր եկեղեցու գույքի մի մասը՝ տեղի առողջապահական բաժանմունքի պահեստի տնօրեն, հարյուրապետ Ֆեհմի էֆենդիի մոտ, իսկ Ս. Նշան վանքի ջահը՝ Մասուդիե գյուղի մեդրեսեում (թուրքական դպրոց) Ղալիբ բեյի աշխատասենյակում է կախված եղել[82]:

Այսպիսով, երիտթուրքական կառավարությունը «լքյալ գույքերի» մասին վերոնշյալ իրավական ակտերի ընդունման միջոցով «օրինականացրեց» կայսրությունում մինչ այդ արդեն իրականացվող զանգվածային թալանը՝ մասամբ զսպելով այն և հարստացնելով պետական գանձարանը: Արդյունքում տեղահանված հայերի շարժական ու անշարժ ողջ ունեցվածքի հետ մեկտեղ բռնագրավվեցին, թալանվեցին ու լուծարվեցին նաև ազգապատկան կալվածքներն[83] ու նրանցում առկա մշակութային արժեքները:

---

77 Զաւէն Արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, Գահիրէ, 1947, էջ 140:

78 *Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը,* էջ 221, 227:

79 Տէր Գուրգէնեան Ա., *Կեանքիս սեւ էջը,* Անթիլիաս-Լիբանան, 1960, էջ 34:

80 Տե՛ս նույն տեղում:

81 Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝ 1918 թ. դեկտեմբերի 29-ին, մի խումբ սեբաստահայեր Կ.Պոլսում վերահաստատել են «Սենեքերիմեան Միությունը», որի գլխավոր նպատակն է եղել Սեբաստիա քաղաքի և շրջակա գյուղերի՝ ցեղասպանության հետևանքով ցիրուցան եղած փոքրաթիվ բնակչության փնտրտուքը, համախմբումը, նրանց կորուստների արձանագրումը, ազգային-կրթական գործերի վերակազմավորումը: Տե՛ս «Ալիս», 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիւ 6, էջ 35:

82 Նույն տեղում, էջ 36:

83 Ազգապատկան կալվածքների բռնագրավման վերաբերյալ որոշում ավելի ուշ կայացվել է նաև հույների նկատմամբ. մասնավորապես, 1916 թ. մի որոշման համաձայն՝ վանքերի անշարժ գույք է համարվել այն, ինչը պարունակել է նրանց պատերի ներսում, մնացածն անցնելու էր պետությանը: Տե՛ս Ակցօղլու Յ. Զ., *Մնիծված առյուծի բնաջնջումը,* թարգմանությունը՝ Վարդանյան Լ., Երևան, 2007, էջ 78-79:

գ) Կրթական հաստատություններ. բռնագրավում, յուրացում, ոչնչացում

Հայոց ցեղասպանության ընթացքում երիտթուրքական կառավարությունը բռնագրավել ու յուրացրել է նաև կայսրության հայկական կրթական հաստատությունները:

Ինչպես արդեն նշվել է, վերոնշյալ հիմնական իրավական ակտերից բացի երիտթուրքական կառավարությունն ընդունել է միջանկյալ մի շարք որոշումներ, որոնք վերաբերում են նաև հայկական կրթական հաստատությունների և դրանցում առկա գույքի բռնագրավման ու տնօրինման հարցերին: Այսպես, Ներքին գործերի նախարարությանն առընթեր Աշիրեթների բնակեցման և մուհաջիրների վարչությունը (İskân-i Aşair ve Muhacirîn Müdüriyeti) 1915 թ. հունիսի 9/22-ին[84] ծածկագիր հեռագրեր է հղել նահանգային իշխանություններին, որոնցից մեկում մասնավորապես ասվում է. «Անհրաժեշտ է, որպեսզի մուսուլման գաղթականներին հաստատեն քաղաքների ու գյուղերի այն դպրոցներում, որտեղից հեռացրել են հայերին: Այդուհանդերձ, այդ կառույցներում առկա ուսումնական գույքի քանակն ու արժեքը պետք է գրանցվի և ուղարկվի ընդհանուր գրանցող հանձնախմբերին»[85]: Հատկանշական է, որ այս որոշումը հայերի տեղահանության, գույքերի տնօրինման հարցերին վերաբերող գաղտնի այլ հեռագրերի ու ծածկագրերի հետ միասին 25 օգոստոս 1915 թվակիր 20 կետից կազմված ամփոփագրով (6-րդ կետով) Ներքին գործերի նախարարությունն ուղարկել է «Լքյալ Գույքերու Բ. Հանձնախմբի Բարձր Նախագահութեանը»՝ ի գործադրություն[86]:

Ստորև բերված վավերագրերից երևում է, թե Ներքին գործերի նախարարությունը որքան հետևողականորեն է վերահսկել վերոնշյալ կարգադրությունների գործադրման ընթացքը:

Աշիրեթների բնակեցման և մուհաջիրների վարչության՝ Կեսարիայի «Լքյալ գույքերի» հանձնաժողովի նախագահությանն ուղղված 1915 թ. սեպտեմբերի 8-ի հրահանգում[87] ասվում է. «Ինչպես 24 օգոստոս [1]331 [1915] թվակիր և թիվ 529 ընդհանուր շրջաբերականով տեղեկացրել էինք, որ հեռացված հայերի լքյալ գույքերից՝ դպրոցներին անհրաժեշտ իրերն ու դպրոցական շենքերը պետք է հանձնել կրթական տեսչություններին իսլամ երեխաների օգտին: Սակայն պատվարժան Կրթության նախարարությունից տեղեկացանք, որ որոշ վայրերում Լքյալ գույքերի հանձնաժողովները չեն հանձնել շենքերն ու գույքերը: Հետևաբար, վերստին տեղեկացնում ենք նշվածի համաձայն դպրոցներին [իսլամական] անհրաժեշտ նմանատիպ գույ-

84 Գրականության մեջ հանդիպող հունիսի 24 ամսաթիվը վրիպակ է: Տե՛ս Աստոյան Ա., *Դարի կողոպուտը,* էջ 93-94:

85 Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *նշվ. աշխ.,* էջ 70:

86 Փաստաթղթի օսմաներեն բնագրի լուսապատճենն արևմտահայերեն թարգմանությամբ տե՛ս Գալֆեան Ա., *Զօմախլու,* Նիւ Եորք, հրատ. Զօմախլուի նպաստամատոյց ընկերութեան, «Կոչնակ» տպարան, 1930, էջ 111-117, 131-133: Տե՛ս նաև Սահակյան Վ., «Մատենադարանի՝ Հայոց ցեղասպանության մասին արխիվային վավերագրերը», *Բանբեր Մատենադարանի*, Հ. 25, «Նաիրի» հրատ., 2018, էջ 295-301, 305-307:

87 Կրում է Ներքին գործերի նախարարի փոխխորհրդական Մեհմեդ Սուրհիի ստորագրությունը: Այս փաստաթղթի օսմաներեն բնագրի լուսապատճենն ու թարգմանությունը տե՛ս *Հավելված*, պատկեր 5:

քերն ու շենքերը կրթական տեսչություններին հանձնելու մասին, էֆենդիս[88]»[89]: Չորս օր անց՝ սեպտեմբերի 12-ին, Կեսարիայի «լքյալ գույքերի» հանձնաժողովը գրությամբ կարգադրել է տեղի կրթական տեսչությանը գավառի դպրոցների գրավման, արձանագրման և դրանց ցանկն իրենց ուղարկելու մասին: Նույն օրը՝ սեպտեմբերի 12-ին, Կեսարիայի կրթական տեսուչը, պատասխան գրությամբ[90] արագ արձագանքելով վերոնշյալին, տեղի «լքյալ գույքերի» հանձնաժողովի նախագահությանը տեղեկացնում է հետևյալը. «Կեսարիա գավառից, [շրջակա] գյուղերից և Դևելուի գավառակից տեղափոխված հայերի լքյալ վարժարաններից ցարդ գրավված քսանչորս դպրոցների մեկ կտոր ցանկը կից ուղարկում ենք Ձեզ՝ ի պատասխան 12 սեպտեմբեր [1]331 [1915] թվակիր Ձեր գրության, էֆենդիս»[91]: Վերոնշյալ վավերագրերին հավելենք նաև արդեն նշված 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության 16-րդ հոդվածը, որով փաստորեն ամրագրվում էր կայսրության հայկական դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը՝ լուսավորության մարմիններին հանձնելու մասին:

Տարաբնույթ փաստերը վկայում են, որ վերոնշյալ հրահանգներն անմիջապես գործի են դրվել: Դեռևս 1915 թ. մայիսի 30-ին Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմը Բեռլինի արտգործնախարարությանն ուղղված իր զեկուցագրում հաղորդում է. «…Էնվեր փաշան, օգտվելով պատերազմական իրավիճակից, մտադրած է փակել մեծ թվով հայկական դպրոցներ, թերթեր, արգելել հայերի փոստային նամակագրությունները… Նա համառորեն խնդրում է մեզ չխանգարել իրեն այդ գործում»[92]: Հենրի Մորգենթաուն, երիտթուրքերի այս քաղաքականությունը, իրավացիորեն բնորոշելով որպես համաթուրքականության ծրագրի բաղկացուցիչ մաս, գրում է. «Արդեն նկարագրել եմ այն դժվարությունները, որոնց բախվում էի թուրքերի հետ քրիստոնեական դպրոցների շուրջ հարցերը քննարկելիս: Դրանք արմատախիլ անելու կամ առնվազն թուրքական հաստատությունների վերածելու նրանց վճռականությունը, ընդամենը, մեկ այլ առաջընթաց քայլ էր ազգայնա-

88 Օսմանյան պաշտոնական նամակագրություններում հարգանքի արտահայտության դիմելաձև:

89 Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, ց. 29ա, թղթ. 3, վավ. 142: Թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի: Այս փաստաթղթի օսմաներեն բնագիրը արևմտահայերեն ու անգլերեն թարգմանություններով տե՛ս նաև Գալֆաեան Ա., նշվ. աշխ., էջ 128, 140; Kalfaian A., *Chomaklou. The history of an Armenian village,* New York, 1982, pp. 168-169, սակայն անգլերեն տարբերակում կայսրության Ներքին գործերի նախարարության փոխխորհրդական Մեհմեդ Սուրհիի ստորագրության հատվածում սխալմամբ նշվում է Կրթության նախարարության փոխխորհրդական պաշտոնը, տե՛ս Kalfaian A., նշվ. աշխ., էջ 169: Այս վավերագրի մեկ այլ թարգմանություն տե՛ս նաև Աստոյան Ա., *Դարի կողոպուտը,* էջ 220:

90 Վավերագիրը կրում է Կեսարիայի կրթական տեսուչ Մեհմեդ Թևֆիգ բեյի ստորագրությունը: Այս փաստաթղթի, ինչպես նաև կից ուղարկված բռնագրավված 24 դպրոցների ցանկի օսմաներեն բնագրի լուսապատճենն ու թարգմանությունը տե՛ս *Հավելված*, պատկեր 6:

91 Տե՛ս Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի արխիվ, *Կաթողիկոսական դիվան*, ց. 29ա, թղթ. 3, վավ. 148: Թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի: Այս փաստաթղթի մեկ այլ թարգմանություն տե՛ս նաև Աստոյան Ա., *Դարի կողոպուտը,* էջ 223-225:

92 Барсегов Ю., *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества*, документы и комментарий, том 1, М., Гардарики, 2002, с. 239.

կան այդ ծրագրում»[93]: Համաթուրքականության ծրագրի համատեքստում հայկական դպրոցներն արմատախիլ անելու առումով եզակի է երիտթուրքական կառավարության ընդունած մեկ այլ ծածկագիր որոշում (թվագրվում է 10 հունիս, 1915)[94]: Համաձայն դրա՝ տեղահանության ընթացքում միևնույն գավառի և գավառակների հայ բնակչությունը պետք է տեղաբաշխվեր առանձին-առանձին և թույլ չտրվեր, որպեսզի վերջիններս կարողանան դպրոց բացել, միևնույն ժամանակ ստիպել, որպեսզի հայերն իրենց զավակներին ուղարկեն պետական (թուրքական) դպրոց[95]: Այս որոշումը ևս ներառվել է վերոնշյալ 20 կետից բաղկացած ամփոփագրում (7-րդ կետով) և Ներքին գործերի նախարարության կողմից ուղարկվել «լքյալ գույքեր»-ի հանձնաժողովների նախագահությանը՝ ի գործադրություն[96]:

1915-1918 թթ. հայկական կրթական հաստատությունները բռնագրավվել և օգտագործվել են ամենատարբեր նպատակներով: 1915 թ. Կ.Պոլսում զինվորական իշխանության կողմից գրավվել և զորակայանների են վերածվել «Էստեան», «Ս. Ներսէսեան», «Լևոնեան-Վարդուհեան», «Տատեան», «Ս. խաչ», «Սէմէրճեան-Ճեմարան», «Արամեան-Ունճեան», «Պէզճեան», «Պէրպէրեան», «Տայեան Հայ Օրիորդաց» վարժարանները[97]: Հուլիսին «Մշակ» թերթը գրում է. «…Կ. Պոլսի հայկական բոլոր հաստատութիւնների գոյքը գրաւված է թիւրքաց կառավարութիւնից: Հայ կեանքը մեռել է այնտեղ բառիս բուն նշանակութեամբ»[98]:

Իրավիճակը նույնն էր նաև նահանգներում: Հայերի տեղահանությունից հետո Մալաթիայի ազգային բոլոր հաստատություններն ու կալվածքները բռնագրավվել են կառավարության կողմից[99]: 1916 թ. դրությամբ Երզնկայի հայկական վարժարանների («Ընկերական», «Եզնիկյան», «Կենտրոնական», «Արամյան» և «Քրիստինյան» իգական վարժարանը՝ կից համանուն մանկապարտեզով) մի մասը հատկացված է եղել մուսուլման գաղթականներին՝ որպես կացարաններ, իսկ մյուսները թեև կանգուն, բայց զուրկ դռներից ու պատուհաններից[100]: Ռոդոսթոյում վարժարաններից մեկը վերածվել է պահեստավայրի, մյուսը՝ թուրքական որբանոցի[101], մեկ այլ դեպքում՝ բանտի (ինչպես Սեբաստիայի «Արամյան» վարժարանը, լուսանկարը տե՛ս հավելվածում, Կեմերեկի ներքին թաղի վարժարանը և այլն)՝ հայ տարագրյալներին

93 Morgenthau H., նշվ. աշխ., p. 285.

94 Հեղինակը, ժամանակագրորեն մեջբերելով հայերի տեղահանության և «լքյալ գույքերի» վերաբերյալ մի շարք պաշտոնական փաստաթղթեր, չի մանրամասնում, թե դրանցից յուրաքանչյուրը երիտթուրքական կառավարության հատկապես որ մարմնի կողմից և ում է ուղղված եղել: Տե՛ս Գալֆեան Ա., նշվ. աշխ., էջ 111- 117:

95 Տե՛ս Գալֆեան Ա., նշվ. աշխ., էջ 112, տե՛ս նաև Սահակյան Վ., նշվ. աշխ., էջ 296-297:

96 Նույն տեղում:

97 Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը*, ԺԶ տարի, Կ.Պոլիս, 1922, էջ 376-381:

98 *Լրագիրներից, Թիւրքական պատերազմի շուրջը*, «Մշակ», 1915, 26 յուլիս, թիւ 162, էջ 2:

99 Ալպօյաճեան Ա., *Պատմութիւն Մալաթիոյ Հայոց,* Պէյրութ, «Սեւան», 1961, էջ 959:

100 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 24:

101 *Խմբագրական. Կեանքը Ռօդոսթոյի մէջ*, «Արդարամարտ» (Կ.Պոլիս) օրաթերթ, 1918, 23 նոյեմբեր, թիւ 4 (1819), էջ 2:

այնտեղ արգելափակելու համար[102]: Բռնագրավվել ու յուրացվել են նաև միսիոներական կրթական հաստատությունները: 1915 թ. հուլիսի 19-ին «Եփրատ» քոլեջի նախագահ Էռնստ Ռիգզը Հայ-սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի նախագահությանն ուղղված նամակում նշում է, որ առաքելության մեծ շենքերից 7-ը կառավարության ձեռքում են, միայն մեկն է մնացել իրենց իրավասության տակ[103], իսկ Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դեյվիսը 1915 թ. հուլիսի 11-ի իր տեղեկագրում հավելում է, որ այդ շենքերից մեկը վերածված է զորանոցի, իսկ մյուսներն առայժմ փակ են, սակայն կողոպտված ու ավերված, աշակերտության մեծ մասը տարագրուած է, մի մասը՝ սպանված կամ հարեմներում արգելափակված, ուսուցիչներից չորսը սպանված են, երեքն՝ առայժմ ողջ[104]:

1915-1916 թթ. ընթացքում մերձճակատային բնակավայրերի, մասնավորապես Վանի և Էրզրումի կրթօջախների մեծ մասը կողոպտվել, հրկիզվել ու ավերվել է թուրքական զորքերի կողմից: Մասնավորապես 1915 թ. ապրիլին թուրքական կանոնավոր զորքը պատմամշակութային, ազգային բազմաթիվ շինությունների հետ մեկտեղ կողոպտել, հրկիզել ու ավերել է Վանի գավառի Կուռուպաշ, Ատեր, Գոմս, Էրերին, Մարմետ, Ջանիկ, Քյոչանի, Քերծ, Առեղ, Կեմ, Կղզի, Հնդստան, Մաշտակ, Մարգս, Գործոթ, Խաչան, Բլուրմակ, Սոսկուն գյուղերի, ինչպես նաև Ականց-Արճեշ գյուղաքաղաքի առաքելական ու բողոքական հայերին պատկանող դպրոցները, «Երկաթեան» կոչված գրադարան-ընթերցատունը[105] և այլ հաստատություններ: 1915 թ. հիմնովին ավերվել են նաև Վան քաղաքի «Երեմյան» վարժարանը (լուսանկարը տե՛ս հավելվածում), «Ավետիսյան» գրադարան-ընթերցարանը, «Վան-Տոսպ» թերթի տպագրատունը[106], Քղի-Գասապա գյուղաքաղաքի (Էրզրումի գավառ) երկու վարժարանները, բողոքական հայերի նախակրթարանը[107], Սեբաստիա քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցուն կից վարժարանը և բազմաթիվ այլ կրթօջախներ[108]: 1916 թ. փետրվարի 15-ին Էրզրումում թուրքական զորքերը ոմբակոծությամբ քանդել են առաջնորդարանը, շուկան՝ հրկիզելով հայերին պատկանող բոլոր վարժարանները[109]:

---

102 Սեբաստիայի «Արամյան» վարժարանը թուրքերը բռնագրավել են դեռևս 1914 թ. դեկտեմբերի 12/25-ին և վերածել զինվորական արհեստանոցի, ապա՝ բանտի: Տե՛ս «Ալիս», 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիւ 6, էջ 31, ինչպես նաև Գալֆաեան Ա., նշվ. աշխ., էջ 108:

103 *The treatment of Armenians in the Ottoman Empire*, p. 278.

104 *Հայկական ջարդերը. Տոքթ. Եոհանես Լեփսիուսի տեղեկագիրը*, Պէյրութ, 1965, էջ 85:

105 *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու,* հատ. Ա, Վանի նահանգ, Երևան, 2012, Հայաստանի ազգային արխիվ, վկայություններ N 12, 69, 71, 74, 81, 83, 85-86, 87, 90, 98, 100, 104, 107, 108, 128, 129, 134, 142, 149, 161, էջ 42-43, 123-124, 125, 131, 138, 142, 145-147, 148, 153, 165, 168, 174, 180, 183, 211-214, 219, 229, 241, 255:

106 *Լրագիրներից. Թիւրքական պատերազմի շուրջը*, «Մշակ», 1915, 11 սեպտեմբեր, թիւ 199, էջ 1:

107 *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու,* հատ. Գ, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ Պարսկահայք, Երևան, ՀԱԱ, 2012, վկայություն N 32, էջ 127:

108 Գաբիկեան Կ., *նշվ. աշխ.,* էջ 562: Տե՛ս նաև «Ալիս», 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիւ 6, էջ 36: Ծոցիկեան Ս. Մ., *նշվ. աշխ.,* էջ 59:

109 Ակունի Սեպուհ, *նշվ. աշխ.,* Կ.Պոլիս, 1920, էջ 144:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության տարիներին Ներքին գործերի նախարարության կարգադրությամբ և անմիջական վերահսկողությամբ բռնագրավվել, յուրացվել կամ ոչնչացվել են նաև հայկական կրթական հաստատությունները: 1915-1918 թթ. ընթացքում այդ հաստատություններն օգտագործվել են հետևյալ հիմնական նպատակներով.

- Դպրոցական շենքերի մի մասի և գույքի մեծ մասի տնօրինման իրավունքը հանձնվել է կրթական տեսչություններին ու լուսավորության մարմիններին՝ իսլամական դպրոցների օգտին օգտագործելու համար:
- Պատերազմական նկատառումներով վերածվելով զորանոցների՝ մի կողմից ռազմագերիների, մյուս կողմից՝ թուրքական բանակի զինվորների համար:
- Ծառայել են որպես բանտեր՝ հայ տարագրյալներին այնտեղ արգելափակելու համար, պահեստավայրեր՝ տեղահանվածների ունեցվածքի կուտակման համար, կացարաններ՝ մուսուլման գաղթականների համար և այլն:
- Ավերվել են, քարերն օգտագործվել որպես շինանյութ:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության տարիներին ֆիզիկական բնաջնջումն ուղեկցվեց հայկական մշակութային արժեքների զանգվածային յուրացման ու ոչնչացման հետևողական քաղաքականությամբ, որը, մեր խորին համոզմամբ, հայերի բնաջնջման երիտթուրքական ծրագրի մաս է կազմել: Այդ քաղաքականության մեջ ներգրավված են եղել հասարակության լայն զանգվածներ՝ բանակ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ, մուսուլման ազգաբնակչություն, այդ թվում և «մուհաջիրներ», որոնք գործել են ոչ միայն բացարձակ անպատժելիության ու ամենաթողության մթնոլորտում, այլև հաճախ վերևից հրահանգավորված ու արտոնված են եղել: Այս հանգամանքն ինքնին խոսում է հայության ունեցվածքի, այդ թվում և ազգապատկան հարստության յուրացման ու ոչնչացման դիտավորության մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Պատկեր 1. 1915 թ. հոկտեմբերի 26-ին հրապարակված 25 հոդվածներից կազմված կանոնադրության օսմաներեն բնագրի առաջին և վերջին էջերը: Կրում է «13 սեպտեմբեր 1331 [1915]-ին տրված ժամանակավոր օրենքի գործադրումը հստակեցնող կանոնագիր» խորագիրը:

Միհրան Մինասյանի հավաքածու



ملك نظارتى

املاك اميريه مديريتى

نومرو

٧٧٥

١٣ ايلول ١٣٣١ تاريخلى قانون موقتك صور

اجرائيه‌سنى مبين نظامنامه

برنجى فصل

اموال غير منقوله‌يه دائر در

ماده : ١ نقل اولنان اشخاصه عائد اموال غيرمنقوله‌نك بولنديغى هر قضاده اشبو نظامنامه‌نك رسماً تبليغ ايدلديكنك ايرتسى كونى او محلك اك بيوك ملكيه مأمورى طرفندن ينه اوملك اك بيوك مال مأمورينك تحت رياستده ويركو وطابو ونفوس اداره‌لرندن وموجود ايسه اوقاف دائره‌سندن آلنه‌جق برر مأموردن مركب بر هيئت تشكيل اولنور . بوهيئت اول امرده اشخاص مذكوره‌نك تاريخ نقللرندن اون بش كون اولنكى مدت داخلنده ويا نقل امرينك تبليغندن صكره اجرا ايتمش اولدقلرى بالجمله معاملات فراغيه‌نك دفتر خاقانى ضبط دفترلرندن اوچ كون ظرفنده بر جدولنى چيقاره‌رق زيرينى بالتختيم تصفيه قوميسيونه توديع ايلر .

تاريخ نقل ايلك نقل امرينك ويرلديكى كوندركه محلنك اك بيوك ملكيه مأمورى طرفندن تحريراً وقوع بوله‌جق تصديق ايله‌تعين وتحقق ايدر .

ماده : ٢١ قانون مخصوص ایله اشبو نظامنامه‌ده تعین ایدیلن وظائفك تأمین وتسریع اجراسی ایچون رئیس طرفندن کوستریله‌جك لزوم اوزرینه قومیسیون معیته حکومتجه مقدار کافی پولیس وژاندارمه ترفیق اولنور .

ماده : ٢٢ قومیسیونلرك معاملاتی حکومت مرکزیه‌نك تحت تفتیش ومراقبه‌سنده بولندیریلیر .

ماده : ٢٣ قانون مخصوص ایله نظامنامه‌ده معین وظائفك قصداً ویااهمال وتراخی نتیجه‌سی اوله‌رق عدم ایفاسندن متولد ضررلردن رئیس واعضا مالاً دخی مسئول طوتیلورلر .

ماده : ٢٤ اشبو نظامنامه تاریخ نشرندن معتبردر .

ماده : ٢٥ بو نظامنامه‌نك اجرای احکامنه داخلیه ، عدلیه ومالیه ناظرلری مأموردر .

اشبو لایحهٔ نظامیه‌نك موقع مرعیته وضعنی ونظامات دولته علاوه‌سنی اراده ایلدم .

٣٠ ذی‌الحجه ١٣٣٣ ٢٦ تشرین‌اول ١٣٣١

محمد رشاد

شیخ‌الاسلام واوقاف همایون ناظری
خیری

صدراعظم
محمد سعید

داخلیه‌ناظری ومالیه ناظر وکیلی
طلعت

حربیه‌ناظری وبحریه‌ناظری وکیلی
انور

عدلیه ناظری وشورای دولت رئیس وکیلی
ابراهیم

خارجیه ناظری
خلیل

معارف‌ناظری وپوسته‌وتلغراف وتلفون‌ناظر وکیلی
احمد شکری

نافعه ناظری
عباس

تجارت وزراعت ناظری
احمد نسیمی

Պատկեր 2. 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության օսմաներեն բնագրի 8 և 9-րդ էջերը և 16-րդ հոդվածը. «եկեղեցիներում գտնվող գույքերը, պատկերները, սուրբ գրքերը պետք է արձանագրվեն տոմարի մեջ և վերցվեն պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը փոխանցել կրթական տեսչություններին»:

Միհրան Մինասյանի հավաքածու



— ٨ —

نتیجهٔ تحقیقات وتدقیقاتده نقل ایدیلن اشخاصك سائر کیمسه‌لرده مطلوبلری اولدیغی اکلاشیلان حقوق ومبالغی استیفا وتحصیله ولدی الحاجه اقامهٔ دعوایه تشبث ایتمك و نقل اولنان اشخاص لهنه دردست رؤیت اولدیغی خبر آلنان دعاوی‌یی ١٣ ایلول ١٣٣١ تاریخلی قانونك یدنجی ماده‌سنك صوك فقره‌سی وجهله تعقیب وانتاج ایتمك .

ماده: ١٤ دوائر ومؤسسات وبانقه‌لر وافراد مادهٔ سابقه‌نك اوچنجی فقره‌سی حکمنه توفیقاً قومیسیون رئیسلری طرفندن ایسته‌نیلن حساباتی وعندالایجاب بونلری مثبت اوراق وسندات ومکاتیبی درحال اعطایه مجبوردرلر .

ماده : ١٥ قومیسیونلر ، نقل اولنان اشخاص ذمتنده مطلوبات ادعا ایدنلرك تدقیق مطالباتنده مدیونلرك اله کچمش دفاتر تجاریه‌سی بولندیغی حالده اونلرله مقایسه اجرا ، محاکم و دوائر رسمیه‌ده خط وخاتم ویا امضالرینی حاوی اوراق وادعالرینی مؤید وثائق موجود ایسه بونلری جلب، اشخاص مذکوره ایله معاملاتده بولنان موثوق الکلم ذواتك معلوماتنه مراجعت ، شهادتله اثبات مدعا مجاز اولان احواله ادای شهادت ایده‌جکلرك افاداتنی دیکله‌دکدن صکره حضور محکمه‌ده ادای شهادتلری ضمننده اسملرینی مضبطه‌یه درج وتسهیلات بونولری کبی مواضعه‌لی سندات تجاریه‌نك کثرتله تداول ایتدیکی محللرده بوقبیل سندات حقنده تحقیقات عمیقه اجرا ایتمکله مکلفدرلر .

ماده : ١٦ کلیسالرده موجود اشیا وتصاویر وکتب مقدسه ثبت دفتر اولنه‌رق محافظه ایدیله‌جکدر . مکتبلر ایله

مناسترلرك وبالعموم مكتب لوازمنك حق استعمالری معارف اداره‌لرینه دور اولنور .

ماده : ١٧ اصحابی معلوم اولمیان اموال اثمانی اشیانك بولندیغی کوی ویا محله نامنه قید ایدیله‌جك وبالاخره حکومت معرفتیله مذکور کوی و محله اهالیسنك اسکان ایدلدیکی محله کوندریله‌جکدر .

ماده : ١٨ قومیسیونلر اموال منقوله‌نك بالمزایده فروختنده مناسب اولان زمان و مکانی نظره آلمق صورتیله اموال مذکوره‌نك ممکن اولدیغی مرتبه قیمت حقیقیه‌لریله صاتلسنه غیرت ایده‌جکلردر .

ماده : ١٩ قومیسیونلرجه طوتیله‌جق دفاتر حسابیه بر اساس دفتریله برده اموال متروکه حساب جاری دفاترندن عبارت اولوب بو ایکی دفترك نمونه‌لری وصورت استعمالرینی مبین تعریفنامه اشبو نظامنامه‌یه ربط ایدلمشدر . قومیسیونلر لزوم و احتیاج کوره‌بیله‌جکلری دفاتر معاونه‌یی‌ده استعمال ایدرلر. حساباتك منتظماً وتعریفنامه‌ده‌مندرج قواعد دائره‌سنده طوتلمسنی تأمیناً قومیسیون رئیسی قیود دفاتری متمادیاً تحت تفتیش و مراقبه‌ده بولندیره‌جق و حسابك عدم انتظامندن تولد ایده‌بیله‌جك بالعموم نواقص و سوء استعمالاتك مسؤلیتی رئیسه راجع اوله‌جقدر .

ماده : ٢٠ قومیسیونلرك قانون مخصوص ایله اشبو نظامنامه احکامی دائره‌سنده وقوع بوله‌جق اشعارات وتبلیغاتی مأمورین عائده‌سی طرفندن مجبوری‌الایفادر .

Պատկեր 3. Գույքագրման ձևաթղթի օրինակ յուրաքանչյուր հայ ընտանիքի գույքի գրանցման համար՝ կցված տեղահանված հայերի «լքյալ» անշարժ գույքի տնօրինման վերաբերյալ 1915 թ. դեկտեմբերի 2(15)-ին ընդունված հավելյալ օրենքին:

Միհրան Մինասյանի հավաքածու

صورت — اموال متروکه حساب جاری دفتری

محله ویا قریه :
اسم و شهرت :
دوسیه نومروسی:

طابلو : ١

صره نومروسی	متروکات عمومیه یکونی	نقود	مودوعات	مطلوبات	اموال غیر منقوله بدلاتی: صاتیلان اموال منقوله بدلاتی	خزینهٔ اوقافه ویریلان وقف	خزینهٔ مالیه یه ویریلان ملك	تاریخ معامله	مستند اولدیغی اوراقك: نومروسی	تاریخی	نوعی	ایضاحات
١	٢	٣	٤	٥	٦	٧	٨	٩	١٠	١١	١٢	١٣

طابلو : ٢

صره نومروسی	متروکات عمومیه یکونی	نقود	مودوعات	مطلوبات	متروکات وحاصلاتدن تحصیلات اولوب مال صندوقلرینه امانة توديع اولنان	اموال غیر منقوله بدلاتی: صاتیلان اموال منقوله بدلاتی	خزینهٔ اوقافه ویریلان وقف	خزینهٔ مالیه یه ویریلان ملك	تاریخ معامله	مستند اولدیغی اوراقك: نومروسی	تاریخی	نوعی	ایضاحات
١	٢	٣	٤	٥	٦	٧	٨	٩	١٠	١١	١٢	

طابلو : ٣ دیون

صره نومروسی	یکون	ممتازه	غیرممتازه	تاریخ تحقق	نومرو	تاریخی	نوعی	ایضاحات
١	٢	٣	٤	٥	٦	٧	٨	٩

طابلو : ٤ — متروك اموال منقوله ایچون مصارف

صره نومروسی	تأدیه اولنان مصارف	تاریخ تأدیه	مستند اولدیغی اوراقك: نومروسی	تاریخی	نوعی	ایضاحات
١	٢	٣	٤	٥	٦	٧

Պատկեր 4. Առաքել Չաքրյանի նամակը՝ ուղղված Զավեն արք. Եղիայանին, Բերա, 1919 թ., 16 մարտ:

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվ, անմշակ ֆոնդ





Հայ ազգս առաջ դեռ խոսում է. բայց եթե իր գոյն ցույց տրվի թնա
չգտնվեր, ապա գոնե իրազեկվեր այս պարագաներ իսկական դրությունը
դահլիճ, ազգեցիկ և թարմ ուժերու Դրացուներ գտնուած է:
Դասում տեղ հիշեցնում ամենայնիվ գտնուիր ցանկ եթե կրկ Ցեղասպանության
պետք բացատրեմ:

Պրոֆ: 1° Գասպարյան գեղագիտ հայերեն. 2° Լ. Նորեանի գեղագիտ հայերեն. 12.
3° Հ. Թոքմաջյան 11ր. (եթե ազատ չունիր). 4° Օրբելի (բացակա) հետաքրքիր
անձնական պրոֆեսոր յուրաքանչյուրը:

Բանաստեղծ: Գեղամ Սամվելյան. Ռաֆի Ծաղիկյան. Վարդգես Պետրոսյան:
Վարդանյան բանը իր գործն է. ազգային ցանց ցեղասպանությունը բացատրում:
Վարդ Վարդապետ Վարդանյան: Վարդանյան: Սիրի բիլիզ ցանց բանդերմի:
ազգասիրություն կարգ է:

Վեր-շաբաթ պարզաբանում. բեմ-գրան ցանց ցանց բանդերմի
Ցեղասպանության ազգասիրություն:

– Հանդիպի դեպքում. պետք է ցանց ցանցը հանդիսանի որ թնաց գալու
ցանց բանդերմիան էր. Ցեղասպանությունը ազգասիրություն:

Բերա 16 Հունվար 1919 Լեոնիդ Զուբերյան

Պատկեր 5. Ներքին գործերի նախարարության Աշիրեթների բնակեցման և մուհաջիրների վարչության՝ Կեսարիայի «լքյալ գույքերի» հանձնաժողովի նախագահությանն ուղղված հրահանգը, 1915 թ. 8 սեպտեմբերի

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 29ա, թղթ. 3, վավ. 142:



Պատկեր 5-ի թարգմանությունը.

«Հանուն ամենակարող Աստծո
Բաբը Ալի մուհաջիրների տնօրինություն թիվ ընդհ. 583 մասն. -
Կեսարիայի Լքյալ գույքերի հանձնաժողովի նախագահությանը

Ինչպես 24 օգոստոս [1]331 [1915] թվակիր և թիվ 529 ընդհանուր շրջաբերականով տեղեկացրել էինք, որ հեռացված հայերի լքյալ գույքերից՝ դպրոցներին անհրաժեշտ իրերն ու դպրոցական շենքերը պետք է հանձնել կրթական տեսչություններին իսլամ երեխաների օգտին: Սակայն պատվարժան Կրթության նախարարությունից տեղեկացանք, որ որոշ վայրերում Լքյալ գույքերի հանձնաժողովները չեն հանձնել շենքերն ու գույքերը: Հետևաբար, վերստին տեղեկացնում ենք նշվածի համաձայն դպրոցներին [իսլամական] անհրաժեշտ նմանատիպ գույքերն ու շենքերը կրթական տեսչություններին հանձնելու մասին, էֆենդիս:

19 Zilkade [1]333
8 սեպտեմբեր [1]331

Ներքին գործերի նախարարության
փոխխորհրդական Մեհմեդ Սուբհի»[110]:

110 Օսմաներեն բնագրից թարգմանությունը՝ բանասեր, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Միհրան Մինասյանի:

Պատկեր 6. Կեսարիայի կրթական տեսուչի՝ Կեսարիայի «լքյալ գույքերի» հանձնաժողովի նախագահությանն ուղղված պատասխան-գրությունը՝ կից ուղարկված բռնագրավված 24 դպրոցների ցանկով, 1915 թ. սեպտեմբերի 12

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 29ա, թղթ. 3, վավ. 148:





[illegible]	قضا	ناحیه	قریه	محله	عدد	ملاحظه
قیصری	قیصری	.	.	یاغچه باشی	۱	دار المعلمین اتخاذ اولنمشدر
"	"	.	.	کچی خلو	۱	
"	"	.	.	جعفر بک	۱	دار الادب ابتدائیسی اتخاذ اولنمشدر
"	"	.	.	ستاندکی	۱	خانه ادلویه اوکسوز یوردی اتخاذ اولنمشدر
"	"	.	کرمجوریس	.	۱	
"	"	طلاس	طاوسوسه	.	۱	
"	"	اخیزه	اخیزه	.	۱	
"	دوه لو	.	.	اوه رلی	۲	
"	"	.	.	فنس	۲	
"	"	طوماره	طوماره	.	۲	
"	"	.	جوماخلی	.	۲	
"	"	.	انجه جو	.	۱	
"	"	.	جوجوسه	.	۱	
"	"	.	سوکولی	.	۱	
"	"	.	یاغجلی	.	۱	
"	"	.	قازلی کومدی	.	۱	
"	"	.	یکیجه	.	۱	
"	"	.	طاشخانه	.	۱	
"	"	.	سارقه	.	۱	
"	"	.	قره جه دیرانه	.	۱	
					۲۷	یکون

نفل مکاتبه بدر بلانه ارجیلدی دنه خصوصی مکاتبه مرکزلو ایله قیه لرنده و دوه لو قضاسنده مصارف نفیه وضع ایدلنماسی برجهه
درمیان مکاتبه دخی بدر بلانه

Պատկեր 6-ի թարգմանությունը

Հանուն ամենակարող Աստծո
Կեսարիայի կրթական տեսչություն
թիվ 52 (կնիք)

Կեսարիայի Լքյալ գույքերի հանձնաժողովի պատվարժան նախագահություն

Կեսարիա գավառից, [շրջակա] գյուղերից և Դևելուի գավառակից տեղափոխված հայերի լքյալ վարժարաններից ցարդ գրավված քսանչորս դպրոցների մեկ կտոր ցանկը կից ուղարկում ենք Ձեզ՝ ի պատասխան 12 սեպտեմբեր [1]331 [1915] թվակիր Ձեր գրության, էֆենդիս:

12 սեպտեմբեր [1]331
Կեսարիայի կրթական տեսուչ
Մեհմեդ Թևֆիգ[111]

Սանջակի կենտրոն Կեսարիայից, գյուղերից և Դևելուի գավառակից այլ վայրեր տեղափոխված հայերի լքյալ դպրոցների՝ Կրթական տեսչության համար գրավված 24 դպրոցների ցանկը

12 սեպտեմբեր [1]331

Սանջակ (գավառ)	**կազա (գավառակ)**	**նահիյե (գյուղախումբ)**	**գյուղ**	**թաղ**	**թիվ**	**ծանոթություններ**
Կեսարիա	Կեսարիա	-	-	Բահչե բաշը	1	Ընդունված է որպես վարժա-պետանոց
=	=	-	-	Գեչիգափու	1	
=	=	-	-	Ջաֆեր բեյ	1	Ընդունված է «Դար Ալ-Ադաբ» նախակրթա-րանի կողմից

111 Օսմաներեն բնագրից թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի:

Սանջակ (գավառ)	կազա (գավառակ)	նահիյե (գյուղախումբ)	գյուղ	թաղ	թիվ	ծանոթություններ
=	=	-	-	Սինանօյու	1	տուն լինելով՝ տրվել է որբանոցի
=	=	-	Կերմիր	-	1	
=	=	Թալաս	Թավլուսուն	-	1	
=	=	Էֆքերե	Էֆքերե	-	1	
=	Դևելու	-	Էվերեկ	-	2	
=	=	-	Ֆենեսե	-	2	
=	=	Թոմարզա	Թոմարզա	-	2	
=	=	-	Զոմախլու	-	2	
=	=	-	Ինջեսու	-	1	
=	=	-	Ջյուջյուն	-	1	
=	=	-	Սեոյությու	-	1	
=	=	-	Յաղթը	-	1	
=	=	-	Քազլը Գեոմեթի	-	1	
=	=	-	Յենիջե	-	1	
=	=	-	Թաշխան	-	1	
=	=	-	Սազագ	-	1	
=	=	-	Գարաջա վերան	-	1	
				Ընդհանուր գումար	24	

YOUNG TURK'S POLICY OF APPROPRITION AND DESTRUCTION OF THE ARMENIAN CULTURAL VALUES (1915-1918)

Seda Parsamyan

SUMMARY

The article presents the Young Turks' policy of appropriation and destruction of the Armenian cultural values during 1915-1918 as part of a genocidal program with the following observations:

1. The paper shows the development of mechanisms for the further appropriation of the Armenian estate before the Genocide by the government. The Young Turks' consistent policy of recognizing the Armenian church property as unclaimed/without legal heir is considered to be an example of such a deliberate step.
2. The paper presents the decisions of the government aimed at confiscation of the Armenians' private and national property during the genocide, and their consistent application.
3. The paper discusses the issue of the involvement of masses and their role in the appropriation and confiscation of the Armenian cultural values.

Keywords: cultural value, national property, Young Turks government, governmental decisions, destruction, confiscation, appropriation, state policy, genocide, intent.

МЛАДОТУРЕЦКАЯ ПОЛИТИКА ПРИСВОЕНИЯ И УНИЧТОЖЕНИЯ АРМЯНСКИХ КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ (1915-1918 гг.)

Седа Парсамян

РЕЗЮМЕ

В статье представлена политика присвоения и уничтожения армянских культурных ценностей в 1915-1918 гг., как составная часть младотурецкой геноцидальной программы, с помощью следующих наблюдений:

1. До геноцида правительство разработало механизм для дальнейшего присвоения армянского национального имущества. Таким преднамеренным шагом являлась, например, последовательная политика младотурок, направленная на признание отсутствия наследников имущества Армянской церкви.
2. Правительственные решения, направленные на конфискацию личного и национального имущества армян в период геноцида, и их последовательное применение.
3. Участие и функции широких слоев турецкого общества в присвоении и уничтожении армянских культурных ценностей.

Ключевые слова: культурная ценность, национальное имущество, младотурецкое правительство, правительственные решения, уничтожение, конфискация, присвоение, государственная политика, геноцид, преднамеренность.